# ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ 2015

## Եկեք միասին ստեղծենք ավելի լավ համացանց:

Դասի նպատակը-Պարզել, թե ինչու է անհրաժեշտ ամբողջ աշխարհում նշել Ապահով համացանցի օրը, ինչպես ճիշտ կողմնորոշվել համացանցում՝ չդառնալով խաբեության զոհ, ինչպես պաշտպանվել վիրուսներից, խորհուրդների միջոցով նպաստել համացանցից ապահով և անվտանգ օգտվելուն, ինչպես նաև համացանցը դարձնել օգտակար միջավայր տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց համար:

Անհրաժեշտ սարքավորումներ-Համակարգիչ, պրոյեկտոր, դինամիկներ:

Դասի պլանը

1. Դասի նպատակի ներկայացում: 5 րոպե
2. Թեմաների ներկայացում: 15 րոպե
3. Վիրտուալ շրջագայություն, խորհուրդներ: 10 րոպե
4. Թեստավորում E Safety Kids խաղի օգնությամբ: 10 րոպե
5. Ամփոփում, աշակերտների պատրաստած տեսահոլովակի դիտում: 5 րոպե

## Դասի ընթացքը

### 1.Նախապատրաստական մաս

Ամեն տարի ողջ աշխարհում մարդիկ տոնում են Ապահով Համացանցի օրը, որն ըստ ավանդության նշվում է յուրաքանչյուր տարվա երկրորդ ամսվա երկրորդ երեքշաբթի: Անվտանգ Համացանցի միջազգային օրը նշվում է 2004թ-ից սկսած: Իսկ Հայաստանում՝ 2009թ-ից: 2004 թվականին Եվրոպայի անվտանգ Ինտերնետի կենտրոնների ցանցը՝ Insafe-ը, որը գործում է Եվրահանձնաժողովի «Անվտանգ Համացանց» ծրագրի շրջանակներում, զբաղվում է այս տոնի կազմակերպմամբ: Այժմ Անվտանգ Համացանցի օրը նշվում է աշխարհի ավելի քան 110 երկրներում, որտեղ կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու հանրության, մասնավորապես երեխաների տեղեկացվածությունը համացանցի առավելությունների և հնարավոր վտանգների մասին:

«Եկեք միասին ստեղծենք ավելի լավ համացանց» -ահա սա է այս տարվա կարգախոսը: Սա կարեւոր միջազգային օր է՝ նվիրված ցանցում երեխաների եւ չափահասների անվտանգության հիմնախնդրին եւ բարենպաստ վիրտուալ միջավայրի ձեւավորմանը: Մինչ օրս շարունակվում են այդ օրվան նվիրված միջոցառումները:

### 2.Համացանցի հնարավորությունների ներկայացում

Այսօր աշխարհի բնակչության ավելի քան մեկ երրորդն օգտվում է համացանցից, և այս թիվը շարունակում է աճել: Դժվար է պատկերացնել մարդկային գործունեության որևէ բնագավառ, ուր թափանցած չլինի համացանցը՝ տեղեկատվական անսպառ շտեմարաններ, զանգվածային լրատվամիջոցներ, եղանակի կանխատեսում, թվայնացված քարտեզներ ու գրքեր, սոցիալական ցանցեր, առցանց առևտուր, թվային գրադարաններ ու թանգարաններ, երաժշտություն, նկարներ, տեսանյութեր, առցանց խաղեր, առողջապահություն, կառավարում: Սրանք միայն մի փոքր մասն են այն ոլորտների, որտեղ համացանցի շնորհիվ

արմատապես փոխվել են մարդկանց ապրելու, շփվելու, սովորելու, աշխատելու և հանգստանալու ձևն ու հնարավորությունները:

## 3.Թեմաների ներկայացում

Սովորողներին բաժանել 5 խմբի: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի հետևյալ թեմաներից մեկը.

- Որոնողական համակարգ, տեղեկատվության որոնում(Բեմադրություն-Եղանակի տեսություն)
- Վճարովի ծառայություններ, երաժշտություն(Բեմադրություն-Վճարովի երգ)
- Սոցիալական ցանցեր, բլոգներ(Բեմադրություն-Վիրտուալ ծանոթություն)
- Խաղեր, ժամանցի այլ միջոցներ, կախվածություն(Բեմադրություն-Համակարգչային խաղ)
- Էլեկտրոնային փոստ, ծածկագրեր( Բեմադրություն-Ապրիլմեկյան կատակ)

Յուրաքանչյուր խմբի անդամները նախ նկարագրում են, այնուհետև բեմադրության միջոցով ներկայացնում իրենց թեման:

### 1.Եղանակի տեսություն

Հեղինակ-Գաղտնիք չէ, որ մեր բնակավայր Վանաձորն ունի իրեն բնորոշ եղանակային պայմաններ, քանզի երբեք չես կարող գուշակել՝ օրվա առաջին կեսին տիրող արևային և հաճելի եղանակին կփոխարինի անձրևն ու ամպրոպը:

Շահանեն դպրոցական է: Ամեն երեկո համացանցի օգնությամբ ճշտում է հաջորդ օրվա եղանակը:

Շահանե-Հետաքրքիր է՝ վաղը ինչ է եղանակ է սպասվում Վանաձորում: Օ՜, նորից անձրև, չմոռանամ վերցնել անձրևանոցս:

Հեղինակ-Հաջորդ օրը Շահանեն ու Մալվինան դպրոցից դուրս գալիս նկատեցին, որ անձրև է գալիս:

Մալվինա-Վա՜յ, անձրև է գալիս, իսկ ես անձրևանոց չունեմ, նորից թրջվելով եմ տուն հասնելու:

Շահանե-Ինչ լավ է երեկ համացանցի միջոցով պարզեցի, որ անձրևային եղանակ է լինելու Վանաձորում և վերցրեցի անձրևանոցս:

## 2.Վճարովի երգ

Հեղինակ-Անահիտը սովորում է 8-րդ դասարանում, նա ապագա երգչուհի է: Գուցե դա է պատճառը, որ նա շատ է սիրում համացանցից երգեր ներբեռնել:

Անահիտ-Վերջապես գտա այդ երգը: Այն իմ սիրելի երգն է, հիմա կփորձեմ ներբեռնել այն: Օ՜, ոչ, այն ներբեռնելու համար գումար է անհրաժեշտ: Ես ինչպե՞ս վարվեմ: Իսկ եթե ծնողներից գաղտնի փոխանցեմ անհրաժեշտ գումարն ու ներբեռնեմ այն: Հենց այդպես էլ կվարվեմ, չէ՞ որ շատ եմ փնտրել այս երգը:

Հեղինակ-Սիրելի երեխաներ, առանց ծնողների իմացության մի օգտվեք համացանցի վճարովի ծառայություններից: Հնարավոր է, որ դուք խաբեության զոհ դառնաք: Խորհրդակցեք ձեր ծնողների հետ և հետևեք նրանց խորհուրդներին, չէ որ նրանք մեծ դժվարությամբ են գումար վաստակում:

## 3.Վիրտուալ ծանոթություն



Հեղինակ-Նարինեն սովորում է 10-րդ դասարանում: Երկար ժամանակ է, որ նա սոց, ցանցերից մեկով շփվում է մի տղայի հետ: Սամվելը 23 տարեկան է: Նրանք իրական կյանքում չեն հանդիպել և մինչ օրս շփվում են նամակգրությամբ: Վերջապես նրանք մի օր որոշում են հանդիպել:

Սամվել-Նարինե ջան, բավակին երկար ժամանակ է, որ մենք հաղորդակցվում ենք Facebook-ի միջոցով: Կարծում եմ՝ ժամանակն է, որ հանդիպենք: Ի՞նչ կասես:

Նարինե- Ի՞նչ պատասխանեմ նրան: Գնա՞մ հանդիպման թե՝ ոչ: Իսկ եթե նա այնպիսին չէ, ինչպիսին որ ներկայանում է... բայց շատ եմ ուզում նրան տեսնել իրականում: Լավ, հիմա կգրեմ՝ հիանալի միտք է:

Սամվել-Այդ դեպքում վաղը ժամը 1-ին կսպասեմ քեզ Արցախ պուրակում:

Նարինե-Շատ լավ, ես կգամ:



Հեղինակ-Ճիշտ է, Նարինեն համաձայնվեց հանդիպել Սամվելի հետ, բայց երկար ժամանակ նա երկմտանքի մեջ էր: Ի վերջո նա գնում է հանդիպման: Խոսակցության ժամանակ Սամվելը պարզում է, որ Նարինեն դպրոցական է և սովորում է 10-րդ դասարանում:



Սամվել-Դպրոցակա՞ն, դու դպրոցակա՞ն ես:

Նարինե-Այո...

Սամվել-Փաստորեն դու ստել ես, որ աշխատում ես գովազդային ընկերությունում:

Նարինե-Ախր, ես ուրիշ տարբերակ չունեի, քանի որ շատ էի ուզում քեզ հետ հանդիպել:

Սամվել-Ու բնականաբար ծնողներդ տեղյակ չեն այս հանդիպման մասին:

Նարինե-Դու իրավացի ես:



Սամվել-Ինչ եղել է, եղել: Հիմա ուզում եմ մի քանի խորհուրդ տալ քեզ ապագայի համար, հուսով եմ կլսես:

Նարինե- Այո, իհարկե:



Սամվել-Այժմ ինտերնետային ծանոթությունները շատ արդիական են դարձել: Մարդիկ ծանոթանում և շփվում են համացանցի միջոցով, երբեմն էլ հանդիպում: Հնարավոր է, որ դու խաբեության զոհ դառնայիր, եթե իմ փոխարեն մեկ ուրիշը լիներ: Թող սա դաս լինի երկուսիս համար էլ:

## 4.Համակարգչային խաղեր

Հեղինակ-Համացանցային առցանց խաղերը մեծ ճանաչում ունեն ամբողջ աշխարհում: Եվ տարեց տարի մեծանում է համակարգչային խաղերից օգտվողների թիվը: Գեղամը դպրոցական է: Նա շատ է սիրում խաղալ համակարգչային խաղեր: Եվ օրվա զգալի մասն անց է կացնում համակարգչի առջև:

Գեղամի ընկերներ-Գեղամ, երևի մոռացել ես, որ այսօր Դավիթի ծննդյան օրն է: Նա հիմա մեզ է սպասում, եկ միացիր մեզ:

Գեղամ-Ես չեմ գալիս, զբաղված եմ, ինձ հանգիստ թողեք:

Հեղինակ-Անցնում է ժամանակը, իսկ Գեղամը դեռ համակարգչի առջև նստած է:

Խորհուրդներ ծնողներին: հետևեք համակարգչային խաղերով զբաղվելու երեխաների ծախսած ժամանակին: Հստակ քայլեր ձեռնարկեք, եթե դրանց պատճառով տուժում են դասերը, ակտիվ հանգիստը և այլ հետքրքրություններ:

## 5.Ապրիլմեկյան կատակ

Հեղինակ-Ապրիլի մեկին Աննան որոշեց չար կատակ խաղալ Անիի հետ:

Աննա-Անի, ես քո օգնության կարիքն ունեմ: Ծնողներս արգելելն են ինձ օգտվել սոց. ցանցերից և արգելափակել են իմ էլեկտրոնային փոստի հասցեն: Իսկ հիմա անհրաժեշտ է, որ մի քանի լուսանկար ուղարկեմ իմ բարեկամին: Կարո՞ղ ես տրամադրել քո ծածկանունն ու ծածկագիրը:

Անի-Դու ինձ դժվար կացության մեջ ես զցում, բայց ես չեմ կարող քեզ մերժել, չէ՞ որ դու իմ ամենամտերիմ ընկերուհին ես: Ես անպայման կօգնեմ քեզ:

Հեղինակ-Անին չէր կարող պատկերացնել, որ իր ընկերուհին չար կատակ է խաղացել իր հետ: Իրականում նա ստել էր, թե իբրև լուսանկար է ուղարկելու իր բարեկամին, սակայն նա պարզապես Անիի անունից նամակ է գրել իրենց դասընկեր Անահիտին և հրավիրել Անիենց տուն՝ պատրաստելու պաստառ <<Աշխարհագրություն>> առարկայից: Հաջորդ օրը երբ Անահիտը գալիս է, Անին մնում է զարմացած, թե ինչ պաստառի մասին է խոսք գնում:Խորհուրդ –Երբեք մի տրամադրեք ձեր գաղտնագրերը նույնիսկ ձեր ամենամոտ ընկերներին:

## 3,Վիրտուալ շրջագայություն

Ապահով Համացանցի օրվա կարգախոսը ամբողջացնելու համար կատարենք վիրտուալ շրջագայություն աշխարհով մեկ: Յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է  որևէ երկիր և իր մշակած խորհուրդը: Այն գրում է տվյալ երկրի դրոշի վրա և փակցնում պաստառի վրա:

<<Ապահով համացանց>> հաղորդման շրջանակներում մենք ուղիղ կապ կհաստատենք աշխարհի տարբեր ծայրերում գտնվող մեր գործընկերների հետ: Հիմա մենք գտնվում ենք Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում: Ասում են, որ Հայաստանը թանգարան է բաց երկնքի տակ: Իսկ հիմա Մանեն ձեզ կներկայացնի համացանցի մասին իր մշակած նյութը:

Մի պատասխանեք անծանոթների նամակներին: Համացանցում Ձեզ կարող են սպառնալ, վիրավորել, հրավիրել հանդիպման: Եթե ինչ-որ մեկը ձեզ սպառնացել է, մի՛ պատասխանեք, դիմեք մեծահասակներին: Արգելափակեք այդ մարդուն, որ չստանաք նրա նամակները, հաղորդագրությունները ու անմիջապես ասեք մեծահասակներին, ապա ահազանգեք, շուրջօրյա թեժ գիծ ծառայությանը՝ 60 272 212

Համացանցում մեծատառերով գրությունները ունեն հատուկ իմաստ, նշանակություն: Մեծատառերն ընդունված է օգտագործել ուշադրություն գրավելու համար: Հաճախ այն կիրառվում է, երբ ցանկանում ես ձայնդ բարձ բացնել: Չէ որ համացանցում չկա այլ տարբերակ զայրույթն արտահայտելու համար, այստեղ չես կարող ոչ դեմքիդ արտահայտությունը ցույց տալ, ոչ էլ ձայնիդ բարձրությունը կամ խստությունը: Խուսափե՛ք մեծատառերով գրառումներից:

Եթե կարող եք, օգնեք ուրիշներին: Ինչ եք կարծում ինչու՞ է համացանցում հարցեր տալն արդյունավետ: Որովհետև ձեր հարցերը կարդում են դրանց պատասխաններն իմացող շատ մարդիկ: Եվ եթե նույնիսկ ճշգրիտ պատասխանեն մի քանի մարդ, ինֆորմացիայի ընդհանուր ծավալը Համացանցում կավելանա: Հետևաբար՝ մասնակցեք համացանցի հարց ու պատասխանին:

Գրառումներ անելիս շատ մի ծավալվեք, գրեք հնարավորինս հակիրճ: Քանի որ դիմացինի ժամանակը հարգելը շատ կարևոր է: Շատերը ուղղակի անտեսում են երկար գրառումները:

Պահպանեք ձեր անձնական ինֆորմացիան գաղտնի և ստեղծեք այնպիսի գաղտնաբառեր, որոնք դժվար կլինեն գուշակել: Երբեք մի ասեք ձեր գաղտնաբառը նույնիսկ ձեր ընկերներին:

Մի վստահեք այն ամենին, ինչ ասում են Ձեզ այլ մարդիկ, նրանք կարող են կեղծ լուսանկարներ օգտագործել կամ ստել: Պարզեք, թե ինչ են ուրիշները տեղադրում ցանցում Ձեր մասին եւ զգուշացրեք նրանց, եթե դուք համաձայն չեք այդ ինֆորմացիայի հետ:

Անկախ նրանից, թե այլոք պաշտպանում են կամ խախտում էթիկայի կանոնները հաղորդակցվելիս, դ ուք անշեղորեն հետևեք դրանց:

Տարբեր համակարգերում գրանցվելիս մեզ առաջարկվում է ընտրել գաղտնաբառ: Հաճախ մենք արագորեն լրացնում ենք մեր մտքին եկած առաջին բառը: Հիշեք,որ դա սխալ է:Գաղտնաբառը պետք է լինի բարդ ու երկար:

Համացանցում ծանոթացած անծանոթի հետ հետ իրական կյանքում հանդիպելը լավ գաղափար չէ, բայց այնուամենայնիվ, եթե որոշել եք հանդիպել նրա հետ, ապա այդ մասին տեղյակ պահեք ծնողներին:

Հարգանքով վերաբերվեք այն մարդկանց ժամանակին, ում հետ հաղորդակցվում եք: Հիշեք, որ ցանցային ժամանակը ոչ միայն սահմանափակ է,այլև շատերի համար թանկ:

Եթե համացացում շփոթեցնող ինֆորմացիա եք ստանում կամ հայտնվում եք երկընտրանքի առջև, ապա մի փորձեք ինքնուրույն գլուխ հանել: Դիմեք ծնողների կամ ուսուցիչների օգնությանը:

Միշտ խուսափեք բացել անծանոթ հասցեներից եկած  նամակները: Մի գայթակղվեք հրապուրիչ վերնագրերով: Ձեզ կարող են ուրախացնել, հայտնելով, որ դուք միլիոնատեր եք դարձել: Մի հավատացեք նման հրաշքներին, համացանցում շատ են խարդախները, ովքեր հեշտությամբ իրենց ծուղակը կգցեն ձեզ:

Հակավիրուսային ծրագիրը կարող է հայտնաբերել և ոչնչացնել համակարգչային վիրուսները նախքան դրանք կհասցնեն վնասել ձեր համակարգիչը: Հակավիրուսային ծրագրերն անհրաժեշտ է միշտ թարմացնել:

Համացանցային նոր ծանոթները միշտ չէ,որ այնպիսին են, ինչպիսին ներկայանում են: Ձեր երեխաները կարող են ամուր կապեր հաստատել իրենց առցանց ընկերների հետ և դյուրահավատորեն վստահել նույնիսկ  անծանոթ մարդկանց: Հետևաբար, նրանք կարող են գայթակղվել հանդիպելու այս նոր ընկերներին արտացանցային կյանքում առանց ձեզ տեղեկացնելու:

Մշտապես պահպանեք համացանցային անվտանգության, ինչպես նաև նետիկետի կանոնները,դրանք ստեղծվել են որպեսզի ցանցում ձեզ անվտանգ և ապահով զգաք:

**4. Թեստավորում E Safety Kids http://safe.am/esafetykit/downloads/kidsFull.pdf խաղի օգնությամբ:**

## ՍՏՈՒԳԵ՛Ք ՁԵՐ ՏԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

- Տան բոլոր համակարգիչներն ապահովված են հակավիրուսային և հակալրտեսային ծրագրերով ու փոստաղբային զտիչներով, որոնք մշտապես թարմացվում են:
  ԱՅՈ ՈՉ
- Եթե ծնողներս կամ ես ունենում ենք համակարգչի հետ կապված խնդիր, մենք դիմում ենք մասնագետի օգնությանը
  ԱՅՈ ՈՉ
- Մեր համակարգչում յուրաքանչյուրս ունի առանձին գրանցման հնարավորություն
  ԱՅՈ ՈՉ
- Մենք չենք բացում անծանոթներից ստացված էլեկտրոնային նամակները
  ԱՅՈ ՈՉ
- Մենք միշտ զննում ենք նամակներին կցված հաղորդագրությունները
  ԱՅՈ ՈՉ
- Մենք ընտանիքով օգտագործում ենք համակարգչային զտիչ
  ԱՅՈ ՈՉ
- Համացանցում աշխատանքը ավարտելուց հետո, մենք համակարգիչը անջատում ենք ցանցից
  ԱՅՈ ՈՉ
- Գաղտնաբառերը ընտանեկան գաղտնիք են. մենք դրանք ոչ մեկի չենք ասում
  ԱՅՈ ՈՉ
- Մենք չենք բացում հանկարծակի բացվող պատուհանները և չենք հետևում դրանցում նշված հրամաններին: Դրանք կարող են վիրուսներ պարունակել:
  ԱՅՈ ՈՉ
- Մենք կանոնավոր կերպով ստեղծում ենք կարևոր ֆայլերի պահուստային պատճենները
  ԱՅՈ ՈՉ

### Քանի՞ հարցի եք պատասխանել "ԱՅՈ"

*9-ից 10 դրական պատասխան.* Շնորհավորում ենք: Դուք համացանցային անվտանգության մասնագետ եք: Շարունակե՛ք ձեր հրաշալի գործը ստացեք համակարգում և թարմացրե՛ք համացանցից գրագետ օգտվելու վերաբերյալ ձեր գիտելիքները՝ այցելելով www.webwise.ie և www.safe.am կայքերը:

*6-ից 8 դրական պատասխան.* Շատ լավ է: Ինչպես երևում է, դուք շատ բաներ գիտեք համակարգչի և համացանցի մասին: Այնուամենայնիվ, ժամանակ հատկացրեք ավելին իմանալու համար և անպայման այցելե՛ք www.webwise.ie և www.safe.am կայքերը:

*6-ից քիչ դրական պատասխան.* Ձեր գիտելիքները կատարելագործման կարիք ունեն: Համացանցում «նավարկելը» կարող է լինել զվարճալի կամ ուսուցողական, եթե զինված եք ապահովության կանոններով: Խորհրդակցե՛ք ծնողների կամ ուսուցիչների հետ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար: Մի՛ մոռացեք այցելել www.webwise.ie և www.safe.am կայքերը:

## Արդյո՞ք ճիշտ եք հասկացել

*Լրացրե՛ք բաց թողնված բառերը… եթե կասկածում եք, նայե՛ք տեքստը.*

- Երբեք մի՛ նավարկեք համացանցում, եթե ձեր համակարգչում չկա ..... ծրագիր:
- Դուք կարող եք ձեռք բերել ..... , եթե բաց անեք ..... մարդկանցից ուղարկված նամակներին կցված հաղորդագրությունները, ..... խաղեր կամ երաժշտություն որևէ կայքից, օգտագործեք ..... լազերային դիսկ կամ ..... կամ «նավարկեք» ..... համակարգչով:
- Եթե ձեր համակարգիչն իրեն սկսում է պահել ..... , այն հավանաբար վարակված է:
- Եղե՛ք աչալուրջ ..... մարդկանցից ստացվող նամակներից, որոնք պարունակում են ..... և լի են խոստումներով: Նրանք կարող են լինել .....
- Միայն ..... էլ. փոստի օգտագործումը ամեն նպատակի համար բավարար չէ: Դուք այսպիսով կարող եք մեծացնել ..... ի թիվը:
- Մի՛ վստահեք ձեր գտած ..... լավ կայքին: Ստուգե՛ք առնվազն ..... տարբեր կայքեր և ..... նրանցում գտած տեղեկությունը: Հիշե՛ք, համացանցից օգվելու հնարավորություն ունեցող ..... կարող է ստեղծել և ..... տեղեկություններ ցանցում:
- ..... և ..... ԼԱՎ գործիքներ են և պաշտպանում են ձեր համակարգիչը:
- Եթե դուք պատահաբար գտնում եք վատ բովանդակություն, որը անհարմարության տեղիք է տալիս, ..... այդ մասին ձեր ..... հետ:
- ..... ձեր ծնողներին, եթե հանդիպում եք այնպիսի բովանդակության, որը անհարմարության տեղիք է տալիս:

**5.Դասի ամփոփում, աշակերտների պատրաստած տեսահոլովակի դիտում: Տեսահոլովակը դիտելու համար այցելեք հետևյալ հղմամբ՝** http://1drv.ms/1FAVbE7